



### ՔՐԻՍՏՈՍԻՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ ՄԱՍԻՆ \*)



սանհինգ տարին ի վեր Եվրոպայի, ինչպես նաև Ամերիկայի մեջ հայ նոր սերունդ մը դոյութուն ունի, որ դժբախտաբար իր մայրենի լեզվին տեղակ չէ, որով զուրկ է այն զորավոր կենսական ազդակներ որ զինքը պիտի պահպաներ շրջապատի ապագայնացնող մթնոլորտեն: Մեր նյութեն դուրս է այս իրողութիւնը քննելու հարցը: Չափ կհաստատենք և առանց երբեք իրողութիւն առաջ խոնարհելու և անոր դեմ համարդալին պայքարին պետքը ժխտելու, որ նմիրական պարտականութիւնն է «երկրեն» գաղթած սերունդին, կանհատենք ճիգը՝ այս նորերուն խոսելու իրենց հասկցած լեզվով: Արդարև հիմար բան պիտի ըլլար ըսել այս օրիորդներուն և երիտասարդներուն մեր ազգային նկարագիրը, մեր պատմական մշակույթը, մեր դասական գանձերը, մեր եկեղեցին կարժե ճանչնալ և պարտ է ձեզ ճանչնալ, հետևաբար տիրացեք հայերեն լեզվին և անոր նրբութիւններուն, որպեսզի կարող ըլլաք հաղորդիլ անոնց հետ: Գործնական պիտի ըլլաք ասիկա, և կարծեմ թե հայուն ոգին նախ ճանչնալը շատ ավելի հրապուրիչ պիտի դարձնէր մայրենի լեզվին տիրանալու փափաքը: Անիմաստ պիտի ըլլաք հակառակին ձգտելու: Ասիկա ըմբռնած են արդեն անոնք, որ հայ նոր սերունդի համար, մայրենի լեզվի դասընթացին առընթեր հիմնած են մամուլ տեղական լեզվով հայկական կյանքի առօրյային և մասամբ ալ անցյալին հաղորդակից ընելու համար զիրենք:

Հայաստանյայց եկեղեցին ամենազորավոր ազդակն է և պիտի մնա օտարութեան մեջ հասնող սերունդները հայ պահելու: Այս

մասին շատ գրված է և ավելորդ է կրկնել առ այս բոլոր փաստարկութիւնները: Սեփական լեզու շունեցող շատ մը ժողովուրդներ պետութիւններ կազմած են միմիայն կրօնական հիման վրա, ժողովրդական հատվածներ նույնիսկ բաժնված են իրենց լեզվակից և ցեղակից տարրերն միանալու համար ուրիշ լեզու խոսող և ուրիշ ցեղեկ եղող, բայց միևնույն կրօնական համայնքին պատկանող գավառակիցներու հետ՝ առանձին պետութիւն կազմելու համար, և ասիկա ոչ թե միջին դարուն, ոչ թե կրօնական վեճերու դարերուն, այլ ժամանակակից շրջաններու Եվրոպայի մեջ: Այսպես, ցալտուն օրինակ մը տալու համար հիշենք Հոլանտայի և Պելճիքայի պարագան: Հոլանտացիք ֆլաման են, ֆլամաներնը իրենց լեզուն է: Երբ այս երկիրը կկոչվեր Ստորին Նահանգներ, կաթոլիկ և բողոքական երկու հատվածներու բաժնված էր, արդ կաթոլիկները՝ ցեղով ֆլաման միացան վալոններու՝ ցեղով և լեզվով ֆրանսիական բայց կաթոլիկ՝ կաղմելու համար Պելճիքայի թագավորութիւնը: Կրօնական վեճերը՝ ժամանակին սպառնացին զվիցերական կանտոններու միութեան. և եթե Համադաշնակցութեան գլուխը գտնվող հռատես մարդիկ չհամոզեին ժողովուրդը շեղութիւն որդեգրել Եվրոպան երկու բանակներու բաժնող կաթոլիկ-բողոքական կոիվներու հանդեպ, զվիցերիո գոյութեան շարունակութիւնը հաստատապես անկարելի պիտի դառնար:

Գալով մեր հին գաղութներուն, հայտնի է որ անոնցմե եթե այսօր որևէ հետք կմնա՝ ասիկա շնորհիվ Հայ եկեղեցիին, իսկ կաթոլիկացած Կեղրոնական և Արևելյան Եվրոպայի հին հայ խլակներուն մեջ՝ շնորհիվ Հայ-Կաթոլիկ եկեղեցվո հայկական ծեսին է:

\*) Péré Bedros Kassardjian. L'Eglise Apostolique Armentienne e Sa doctrianel.



Ուրեմն առանձին ուշադրության առարկա պետք է ընենք գաղտնիներու ապագա գոյության մեջ Հայաստանյայց Եկեղեցվո պահպանության կենսական անհրաժեշտությունը: Հայրեն լեզուն պահպանելու մեր ճիգը, դժեզ այնքան պատրանքի՝ անձնատուր չընեն շմակաբերելու համար, որ գուցե դար մը վերջ թերևս անհետանա. բայց վստահ ենք, իրավամբ՝ որ կմնա Հայաստանյայց Եկեղեցին, իր նվիրապետական աղոթակով, կապված Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին:

Մյուս կողմի՝ հայ-քրիստոնյա ծնողքին համար, որ համոզումն ունի իր հարց ուղիղ դավանության և իր եկեղեցիին լայնախոհ վարդապետության, որ հավատացյալ է և այդ հավատքը կուզե որ իր զավակներն ալ ընծայեն Աստուծո այն ոգիով և ինքնաբուխ հանձնարով որով օժտված է հայ ազգը — Հայ եկեղեցիին ավանդին պահպանումը քրիստոնեական երկյուղած զգացում մըն է:

Այս բոլոր կենսական տվյալներուն ընդատաջ կերթա աշխատանքը, որուն լծված է Բարիզի հայոց եկեղեցիին քահանա հայրերեն Տ. Պետրոս Գասարճյան: Իր երկու հրատարակությունները՝ «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և իր Վարդապետությունը» և «Հայ Եկեղեցվո Պատարագը» ֆորանսերեն լեզվով, մեծապես օգտակար գործեր են:

Կարծի որ այս երկու գրքերը թարգմանվին նաև անգլերենի, որովհետև Ամերիկայի հայ անգլիախոս սերունդին համար նույնքան անհրաժեշտ են անոնք, որքան Ֆրանսիայի և Եվրոպայի ֆրանսախոս նոր երիտասարդության համար:



Կիսափաքիմ ընթերցողներուն ներկայացնելի այսօր մոտ 260 էջերե բաղկացած հատորը, որ կխոսի Հայաստանյայց Եկեղեցվո և իր վարդապետության մասին: Այս գործը պատրաստված է այն ձևով, որ յուրաքանչյուր գլուխ կամ մաս ամբողջության մաս կազմելով հանդերձ, առանձին նյութ մը կշոշափե և զայն կլրացնե ըստ ինքյան:

Գիրքը բաժանված է չորս մասերու: Առաջին մասը կպարունակե հակիրճ տեղեկություն մը «հայոց ծագման» մասին, ամփոփ տեղեկություններ հայոց նախաքրիստոնեական կրոնին վրա:

Երկրորդ մասը կխոսի Հայաստանի մեջ քրիստոնեության սկզբնավորության վրա մինչև Ս. Գրիգոր Լուսավորիչ, կպատմե քրիստոնեության հաղթանակը մեր երկրին մեջ, կանդրադառնա Նիկիո ժողովին և կուտա պատմությունը լուսավորչատոհմ կաթողիկոսներու շրջանին և պարսից դեմ մղված Վարդանանց պատերազմին:

Երկրորդ մասը հատկացված է նաև ներկայացնելու Հայոց Եկեղեցիին պատմությունը արաբական արշավանքի շրջանին, իսլամիկներու օրով և այլն:

Երրորդ մասին մեջ հեղինակը կխոսի Հայաստանյայց Եկեղեցիին արդի կացության վրա. սեղմ, բայց կուռ էջերու մեջ ամփոփելով ինչ որ անհրաժեշտ է գաղափար մը կազմելու համար Ամենայն Հայոց Աթոռին, Տանն Կիլիկիո Կաթողիկոսության և մանավանդ Երուսաղեմա Ս. Հակոբա Աթոռին միջազգային դիրքին վրա: Կխոսի հայ գաղտնիներու և իհարկե մասնավորապես Եվրոպայի գաղտնիներուն վրա:

Չորրորդ մասը հատկացված է Հայաստանյայց Եկեղեցվո վարդապետության: Տ. Պետրոս Հայրը ուզած է այս մասում ներկայացնել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո և Հռոմի Առաքելական Եկեղեցվո վարդապետությունները բաղդատակալի մը ձևով: Եվ ի հարկե կխոսի Քաղցեղոնի ժողովին մասին, մանրամասն տալով Հայաստանյայց Եկեղեցվո վարդապետությունը, Եկեղեցվո խորհուրդներու և աստվածաբանական հիմնական տեսություններուն շուրջ: Այս մասին վերջավորության մեջ կուտա նաև ծանոթություններ հայ եկեղեցականներու տրված տիտղոսներու և աշխի մասին:

Գրքին կցված է նաև քարտեզ մը, որ կը ներկայացնե պատմական Հայաստանը և զայն շրջապատող հողամասերը:

Գրքին սկիզբը դրված է Օրմանյան Ս. ի աշակերտ, նախկին արմաշական, պ. Ա. Նավարյանի մեկ նամակը՝ ուղղված հեղինակին. «... այս ուսումնասիրությունը ճիշտ ժամանակին կհասնի — կըսե պ. Նավարյան, — մեծապես օգտակար կնկատեմ զայս, ցրելու համար կարգ մը սխալներ և խել մը նախապաշարումներ, որոնք դարերի ի վեր դիզված են մեր եկեղեցիին դեմ տարբեր եկեղեցիներու կողմից, ... ձեր երկասիրությունը, արժանապատիվ Հայր, հետաքրքրական է մանավանդ այն տեսակետով, որ կընդգրկե ամբողջովին մեր եկեղեցիին դավանությունը, ծեսը, շարականը, պատարագամատույցը, բոլոր աղոթամատույց գրքերը:

ասկից գատ նաև մեր կղերին նվիրապետական դասակարգությունը:

«Կհուսամ, որ ան պիտի կարգացվի և գընահատվի ոչ միայն եկրոպացվոց կողմե, իբրև վավերադրական օգտակար երկ մը, այլ նաև հայերու կողմե, ոտոնդմն որոշ մաս մը, սնոպիզմի կամ տգիտության հետևանքով սկսած են երեսն ձգել իրենց Եկեղեցին և մոռնալ իրենց ցեղային ծագումը, որ սակայն փառավոր անցյալ մը ունի և ցարդ նախանձահույզ կերպով կպահպանեն բոլոր աշխարհներու և դարերու ընդմեջեն իր մաքրությունը, իր հպարտությունը և իր առհավական նկարագրին կնիքը:

«Եկեղեցվո վարդապետության վերաբերյալ մասին մեջ, դավանաբանական, աստվածաբանական տեսակետեն, լայն մեջբերումներ կընեք մագիստրոսական երկասիրութենե մը, որ ցարդ անտիպ կմնա, հեղինակություն Օրմանյան Սրբազանի, որ մեր կղերեն ամենեն նշանավոր անձնավորություններեն մին է:

«Այն բարձր եկեղեցականը, որ օժտված էր գորավոր և լուսավոր միտքով, հմուտ և արգասավոր ուղեղ՝ որ երկար ատեն եղավ ուսուցչապետ փրկիստիայության, աստվածաբանության, բնագանցության և հոգևորական արվեստի, միևնույն ատեն ունենալով անբաղդատելի հաճույքը առինքնող խոսակցողի, կսիրեր տարփազին՝ իր եկեղեցին և իր դպրեվանքը— Արմաշի Մեծ Դպրեվանքը, որու միաժամանակ նախաձեռնողն ու ոգին էր...»

Իսկ Հայր Պետրոս հետևյալ տողերով կը ներկայացնեն իր նպատակը.

«...Այս գիրքը լիակատար գործ մը չէ, ոչ ալ գիտական-գրական ուսումնասիրություն մը... մեր նպատակն է ամփոփ գաղափար մը տալ մեր երիտասարդ հայրենակիցներուն, որոնք Ֆրանսա կբնակին, մեր ազգային եկեղեցիին և իր դավանության վրա:

«...Այս երիտասարդները սա հյուրընկալ երկրին մեջ ծնած են, քիչ մը ամեն կողմ ցրված՝ ստիպված ըլլալով իրենց օրապահիկը ճարել, կբնակին հոն՝ ուր աշխատանք կա: Անոնք, այսպես, կմեծնան առանց տեղյակ ըլլալու իրենց անցյալի փառավոր սխրագործություններուն և իրենց ազգային կրոնական պատմության...»:

Արդարև հույժ օգտակար աշխատանք և մեծապես գովելի ձեռնարկ, որու համար կը նորհավորենք երիտասարդ կրոնավորը: Տ.

Պետրոս Հայր այս ֆրանսերեն գրքին հայերեն թարգմանությունն ալ հրատարակելու վրա է. արդարև միայն մեր օտարախոս սերունդը չէ, որ անտեղյակ է իր եկեղեցիին վարդապետությանց և պատմության, այլ շատեր հայախոս սերունդեն, որոնք երկրի մեջ եկեղեցվո կազմակերպված գոյության և ազգային ավանդություններու մթնոլորտին մեջ, կրնային գոհանալ «եկեղեցի երթալով» և վայելելով կազմակերպված կրոնական համայնքի մը առավելությունները, բայց հիմա օտար երկնքի տակ, ուր մեր եկեղեցին տկար է կազմակերպություն մը և զուրկ ամենուրեք ներկայութենե, պետք ունին իրենց սրտին մեջ ունենալու Հայաստանյայց Եկեղեցվո կենդանի ներկայությունը: Այսպես անոնք շատ ավելի դիտակցորեն և լավ զինված պիտի կրնան պաշտպանել ինչ որ գերազանցապես իրենցն է՝ կոչված հարազատ ուղով ընծայվելու իբրև սեփական՝ Անոր որ յուրաքանչյուրեն կակնկալե արդյունքը՝ յուրաքանչյուրին շնորհած տաղանդին:



Անշուշտ գործ մը երբեք անթերի չէ: Երբ նկատենք որ շատ մը թարգմանություններ հայերենե ֆրանսերեն չեն հաջողած միշտ օգտագործել ֆրանսերեն լեզվի հատկությունները, կընամք հեղինակին ինքնագիր գրվածքը շատ ներկայանալի նկատել լեզվական տեսակետով, չնչին վերապահումներով:

Ըստ մեզ, Հայաստանյայց Եկեղեցվո դավանությունն ու վարդապետությունը ներկայացնելու ձևը կրնար նվազ վիճաբանական գույնով տրվիլ, քան ինչ որ եղած է:

Անշուշտ պատմական կետերու ժամանակին մթնոլորտը և դեպքերու նկարագրությունը ամփոփ կերպով տալը անհրաժեշտ էր, բայց կարելի էր խուսափիլ, առանց գործին ոգվուն և նպատակին վնասելու, ներկայացնել իրենց վիճաբանական ձևին մեջ մեր հայոց պաշտպանողականները՝ վարդապետական այնպիսի կետերու մասին, որոնք ժամանակին ոգվուն արտահայտությունն են:

Տ. Պետրոս Հայր անշուշտ նկատի ունեցած է կաթոլիկ ժողովրդի մթնոլորտը, որու մեջ կապրի Ֆրանսայի հայությունը, և պետք տեսած բաղդատականն ընելու հայկական և կաթոլիկ եկեղեցիներու ըմբռնումներուն: Բայց ուրիշ երկիրներու մեջ, ուր բողոքականությունն է տարածված եկեղեցին, հարկ պիտի ըլլար դիտողական ոգվով ներկայացնել նաև բողոքական վարդապետությանց հանդեպ Հայաստանյայց Եկե-

ղեցվող վարդապետական փաստարկումները:

Կօզտվիմ այս առիթեն, ընդհանուր տեսակետ մը ներկայացնելու համար. այսպիսի դիտողութեանց պարագային պետք է միշտ վեր հանել հիմնական տարրերովը, որ կա Դավանականին և Վարդապետականին միջև: Վարդապետականը Ս. Գրոց զանազան հատվածներու մեկնութիւն մըն է, որ կրնա միաձև շրջալ, նույնիսկ հակասել միևնույն կետին վրա մեկը մյուսին: Ասիկա մեկ բան կապացուցանե, այն, թե մեկը, թե մյուսը կրնան ճշմարտութեան փշուր մը պարունակել իրենց տված մեկնութեան մեջ. և սակայն ոչ մեկը և ոչ մյուսը կրնան պնդել իրենց տեսակետին բացարձակ ճշմարտութեան մասին: Վարդապետութիւնը ժամանակի ոգիին համաձայն կրնա փոփոխվիլ: Մեր եկեղեցին այս տեսակետն ընդունելով անտեղի կընծայե իր զավակներուն համար այդպիսի պատճառով մը հեռանալը իրենց Հայաստանյայց եկեղեցիին:

Նույնիսկ դավանական խնդիրներու մասին, զորս ընդունելը պայման է եկեղեցիի մը պատկանողին համար, կարելի է խորին մտածման առարկա ընել հողելույս Օրմանյան Սրբազանի սա խոսքը.

«Եթե անկարող ենք բացատրել մարմնավոր հոգիի և իմացական հոգիի միացումը, զոր կընդունինք իբրև իմաստասիրական ճշմարտութիւն, եթե անկարող ենք բացա-

տրել և լուսարանել ինչ որ է ի մեզ. ինչպե՞ս պիտի կարենայինք դիտնալ ինչ որ է ի Քրիստոս»:

Երբ բացարձակ ստուգութիւնը, աննյութականի մարզին մեջ, տրված չէ իմացականութեան, որ միմիայն զգալիին ստուգութիւնը կրնա ունենալ, լավագույն է պահել ինչ որ մեր հայոց հոգիին՝ մեր հոգիին ավանդված է:



Անշուշտ երկար խոսեցա այս հրատարակութեան մասին, բայց ընթերցողն անշուշտ հասկցալ, որ նպատակս գրախոսական մը ընել չէր միայն, այլ՝ մանավանդ ներկայացնել այժմէութիւնը այսպիսի հրատարակութեան մը: Անկեղծորեն շնորհավորելի է Տ. Պետրոս քհն. Գասարճեան:

Պիտի ուղեինք, որ Ամերիկայի մեջ ևս այսպիսի հրատարակութիւնն ունեցող գիրք մը լույս տեսներ, նույնքան պատշաճեցված տեղական մթնոլորտին:\*)

Լոզան

(«Պայքար» Մարտ 30 և 31 1946 թ.)

\*) Այս հոդվածը շարված էր, երբ Մայր Աթոռում ստացվեց Տ. Պետրոս քհն. Գասարճեանի վերոհիշյալ աշխատութիւնը: ԽՄԲԱԳԸ.



Լմպատավանի է դարի տաճարի ընդհանուր տեսքը հառապ-արևմուտքից.